

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐ

Դպրոցական Կեանքից (Հ. Էսելբախ)

(Вѣстникъ Воспитанія № 8)

Մերկը նորից չնստաւ. այլ այս անգամ միայն գլխարկը վերցրեց, որը ձեռքում բռնած տրորում էր:

— Ես ձեր որդիներին ձեզնից առաջ սկսեցի ճանաչել. նրանք բարի ու լաւ երեխաներ են:

— Ա՛յ թէ ինչ:

Բացականչութեան մէջ արտայայտւում էր խորը անվստահութիւն:

— Կրկնում եմ՝ խելօք ու բարի տղաներ են: Ձնայելով այն բոլոր կատարած յիմարութիւններին, դեռ ևս նրանց մէջ այնքան լաւ յատկութիւններ կան, որ ես չէի կարող ինձ հաւատացնել, որ կամ մէկը և կամ միւսը ծնողներից վատ լինէին:

— Պ. ուսուցիչ...:

— Այդ իմ համոզմունքն է: Ես թէ ձեր և թէ կնոջ մասին արդէն հաւաքած ունեմ բաւական, դուցէ և ճիշտ, տեղեկութիւններ:

— Ամեն բանի մէջ մեղաւորը կինն է, բարկացած ըղաւեց Մերկը, հա է մեղաւորը. քանի որ ես նրա համար շատ տարիներ աշխատել եմ. երկար տարիներ ես եղել եմ նրա համար օրինաւոր, կարգին մարդ. մի կաթիլ օղի բերանս չէի առնում. իոկ հիմա... հիմա... ոչինչ, ես այդ ամենի համար կը վարձատրեմ թէ կնոջն և թէ այն որիկայ շանը:

Եւ նա ձեռքի հարուածով այնպէս պինդ խփեց դաշնամուրին, որ նրա վերայ դրուած «Бехтовли»ի կիսարձանը վայր ընկաւ ու կտոր կտոր եղաւ:

Բանւորը շփոթուած կտորները վերցնելով իրար վրայ էր դնում:

«Այո՛... Այո՛...» ինքիմիայն նա—«կինն է... կինն...»

— Մերկ, թողէ՛ր կտորները, տանտիկինը յետոյ կը մաքրէ: Դուք տեսնում էք, որ կտորներ անելը շատ էլ դժուար չէ...

Ես առանց դիտաւորութեան... առանց դիտաւորութեան... բայց երբ ես մտաբերում եմ այդ կնոջը, կատաղում եմ և ինձ ցանկալի է նոյն վայրէջանին ամեն բան փշրել...

— Այնտեղ առ այժմս դուք առանց այն էլ բաւական վնաս

տուիր. իսկ հիմա պատմեցէք մանրամասնօրէն, թէ ինչպէս պատահեց այն ամենը:

Եւ Մերկը սկսեց պատմել:

Դա մի իրական տխուր պատմութիւն էր, որից դեռ շատ քիչ բան գիտէր ուսուցիչը, որը միայն աժմս երեւցաւ իր աւելի ազեղ ճիշդ պատկերով:

— Երբ ես աշխատանքից տուն էի վերադառնում ճաշելու, Պ. ուսուցիչ, ինձ ոչոք չէր հանդիպում. ճաշը պատրաստ չէր լինում և ես ահամայ՝ յաճախում էի հասարակական ճաշարան: Ճաշ էի խնդրում տասը կողէկի և շատ անգամ էլ տանուհին: Երեկոներին կրկին ինձ ոչ ոք չէր դիմաւորում: Սենեակը չը մաքրուած, իսկ անկողինները միշտ պատրաստուած չէին լինում:

Իսկ զրացիները կնոջս, երեխաների և այն սրիկայի մասին գլուխ էին տանում:

Իսկ այդ ամենը լսելուց յետոյ, երբ ես հասաղում և դնում էի կնոջս և թէ այն սրիկային պատռա պատռա անելու, այն ժամանակ սկսում էին ինձ հէնց նոյն զրացիները համոզել և տանում էին գինեւան, որ ես օդու ազդեցութեան տակ մոռանայի այդ անտանելի անբաղդութիւնը և ես խմում էի...

Խմում էի, ինչպէս մի գինու տիկ... այնպէս որ չէի կարող այլևս ոտի կանգնել:

Եւ նա նորից բռունցքով տմուր խմեց սեղանին, իսկ նրա հատաղած աչքերը փայլում էին: — Այո՛, ես հարբում էի և դուք էլ, Պ. ուսուցիչ, կը հարբէիք, և թէ ձեր կիներն էլ ձեզ հետ այդ տեսակ վարուէր, ինչպէս իմ կիներն ինձ հետ էր վարում. նա ընկաւ սեղանի վերայ ու խորը ախ քաշեց:

Կենդանգորֆը մօտեցաւ նրան և կարեկցաբար ձեռքը ունի վերայ գրեց:

— Ես ձեզ հիմա լաւ եմ հասկանում, Մերկ. ուրիշների պատմելով ես ձեզ աւելի վատթար էի կարծում. դուք ինձ հազորդեցիք այնպիսի բաներ, որոնք կարող էին թունաւորել նոյն իսկ ամենասիրելի ամուսնու կեանքը...

Ինձ հասկանալի է ձեր գայլօյթը. և ասել՝ թէ դա անաեղի է, ես ոչ մի ձևով չեմ կարող: Մարդիկ՝ ինչ ուղղում են, թող ձեր մասին պատմեն, ես չեմ հաւատում, ես համոզուած եմ, որ դուք վատ մարդ չէք:

— Ոչ, ես յիմար մարդ չեմ, ես անամօթ չեմ, բայց բարի շունն էլ կը կատաղի, եթէ կատաղեցնեն:

— Լա՛ւ, Մերկ, թէ դուք կամենում էք կարգին մարդ լինել, այն ժամանակ գոնէ ձեր երեխաների վերայ հոգ տարէք:

—Բայց նրանք իմ երեխաները չեն, պատասխանեց Մերկը, իմը չեն:

—Դուք ռոտեղից գիտէք, թէ նրանք իմն են. այդ խօսքերի մէջ արտափայլում էր այն մարդու վիշաքը, որը խոր համոզուած էր ու հաւատացած, որ իւր կինը անարգար է և անհաւատարիմ:

—Մերկ, եթէ դուք կասկածում էք, կանգնեցէք միասին ձեր որդոց հետ և նայեցէք հայելու մէջ. նրանք այնպէս քեզ նման են՝ կարծես թէ կիսած խնձոր լինիք:

Եթէ դրանից յետոյ էլ պիտի կասկածէք, որ դուք նրանց հայրն էք, ասել է, դուք գուած էք:

—Իսկ ճիշդ որ դուք հաւատացած էք, թէ նրանք իմ երեխաներն են:

Եւ բանւորի աչքերից ցայտեցին արտասուներներ:

—Երգւում եմ Աստուծու անունով: Բայց դուք նրանց հետ վարուել էք ոչ հօր նման: Ձէ՞ որ նրանք զրկուած են մօրից, Մերկ. աշխարհիս երեսին նրանց համար ոչ ոք չէ մնացել բացի ձեզանից՝ հօրից: Իսկ դուք գիտէք ինչ էք արել ձեր անբաղդու-թեան ժամանակ բոլորովին անմեղ մանուկներին: Դուք դուքս էք շարտել ձեր որդիներին. ստիպել էք մնալ քաղցած, բոլորովին սոված: Ձեր փոքրիկ որդու թիկունքի վերայ ահա թէ ինչպիսի վէրքէ բացուած... և այդ դուք էք պատճառել, հար-բած ժամանակ՝ այն էլ կրակիսառնիչով:... Շատ կարելի է, ես հիմա էլ միակ մարդն եմ, որ կամենում եմ ձեզ բարիք, այն ինչ, եթէ ես համոզուած չըլինէի, որ նոյն բոպէին, երբ այդ արիք, դուք սչինչ չէիք զգում, ես զրկուածիցս կըթքէի ձեր երեսին... Այո՛, կըթքէի, եթէ յոյս չունենայի, որ դուք կա-րող էք հեռացնել այն չարիքը, որը պատճառ է դառել ձեր և որդոցդ անբաղդութեան:

Բանւորի կոշտացած, գործից սեւացած կապտադոյն ձեռ-քերը ջղաձգութեամբ կուշ էին գալիս. դարձեալ մի բոպէ, այլևս նա չըկարողացաւ գիմանալ. գլուխը կախ ձգեց սեղանի վերայ և դառնազին արտասուեց:

Կենիդուդօրօքը չխանդարեց նրան լալ:

—Ձեր սիրտը դեռ բոլորովին չէ հովացել, ասաց նա վեր-ջապէս, —երբ մարդս արտասուում է, կարծես թէ հոգին ու սիրտը հովանում են, իսկ հիմա ձեզ եմ հարցնում, ինչ էք մտա-ծում ձեր երեխաների ապագայի համար:

—Ձրգիտեմ: Ես ամբողջ օրը աշխատում եմ և ինքս ժա-մանակ չունիմ երեխաների վերայ հոգ տանելու:

— Ես ևս այդ էի մտածում: Հետևապէս՝ անհրաժեշտ է առ ժամանակ նրանց որնիցէ պանսիօն տալ:

— Բայց ո՞վ պէտք է նրանց ծախքը հոգայ: Ես օրուայ վարձ չառ քիչ եմ ստանում, նոյն իսկ ինձ չի բաւականացնում: Այս էլ ինկատի ունեցէք, որ ես մինչև կէս օր եմ աշխատում, քանի որ գործ չըկայ:

— Ասա, միայն թէ ինչ որ՝ ձեր ռոճիկից կաւելանայ, այն էլ ինձ բերէք. մինչև որ ձեր գործերը կը լաւանան, ես ձեզ կօգնեմ: Երկու տարի է, որ ես փող եմ խնայում Ֆրանսերէն լեզուէն գործնականապէս սովորելու համար և այդ նպատակով արձակուրդի ամիսներին ուղում էի Պարիզում ապրել: Ես մի կարճ ժամանակով էլ ինձ կը զրկեմ այդ ճանապարհորդութիւնից, իսկ դուք դրա փոխարէն խօսք տուէք, որ այլևս չը լամէք և ձեր բոլոր աւելացած ռոճիկը ինձ բերէք:

— Պարոն ուսուցիչ, պատասխանեց բանւորը, ես դրան արժանի չեմ, չընայելով որ ես խմելուց վաղ կը դամ, բայց ձեր փողերից չեմ կարող օգտուիլ:

— Դուք ձեզ համար մի ընդունէք Մերկ, այլ ձեր տղաների: Իւրաքանչիւր շաբաթ օր դուք պարտական էք ինձ բերել այն, որչափ ձեզ կը յաջողուի նրանց համար խնայել: Ես պակասը կը լրացնեմ, իսկ երբ գործք կը շատանայ, աւել կը սկսէք աշխատել և ինձ կը վերադարձնէք իմ փողերը: Տեսնում էք, ես ձեր ազնիւ խօսքին հաւատում եմ:

— Պարոն ուսուցիչ, երբ գործերը շատանան, ես պատրաստ եմ գիշեր ու ցերեկ առանց հանգստանալու բանել, որ ձեր վերջի կսպէկը վերադարձնեմ՝ տոկոսն էլ, տոկոսի տոկոսն էլ: Ես ձեզ նոյն իսկ կարող եմ ստորագրութիւն էլ տալ, եթէ ցանկանում էք:

— Ինձ ոչ մի ստորագրութիւն պէտք չէ, ահա ինձ մօտ կախ է տուած այն պատկերը, որը ասաց, «Թոյլ տուէք մանուկներին, որ դան ինձ մօտ»: . . . Ես այդ անում եմ ձեր երեսմաների սիրոյ համար, իսկ եթէ դուք խարդախ մարդ էք, այն ժամանակ ստորագրութիւնն էլ չի օգնիլ. եթէ դուք, ինչպէս ես եմ մտածում՝ ազնիւ մարդ էք, ինձ համար ձեր լոկ խօսքն էլ բաւական է, ահա իմ ձեռք: Բայց առաջարկում եմ մի պարտաւորեցուցիչ պայման, դուք չը պէտք է լամէք:

— Ողջ կեանքում այլևս ոչ մի կաթիլ օղի բերանս առնելու չեմ. և Մերկի գէմբի վերայ փայլեց մի ինչ որ . . . որը մինչև անգամ աւելորդ ցաւ պատճառեց երիտասարդ ուսուցչի ձեռք սեղմելիս:

— Շատ լաւ, իսկ հիմա չէիք համենալ երեխաներիդ հետ տեսնուիլ:

— Իսկ ես չը գիտեմ, թէ նրանք որ տեղ են. և նա շփոթուած աչքերը դետին ձգեց:

— Դուք հեռուն որոնելու չէք. նրանք իմ տան հարի տակն են:

— Ախ, պ. ուսուցիչ, ես ձեր այդ ամէն լաւութեան փոխարէն ինչո՞վ պէտք է փոխարինեմ:

— Ձեր որդիների համար լաւ հայր լինելով: Դնանք, եթէ ոչ շուտով նրանց բնելու ժամանակը կը գայ:

Նրանք բարձրանում էին սանդուխով: Մերկը ամօթից սկսեց հազալ և ինքն իրան մրմնջաց «Փառք Արարչին, որ այժմեանից այլ ևս նրանք փողոցներում չեն մնալու: Վերջին աստիճանի վերայ նա ձայն տուեց:

«Պետրոս, Յովսէփ» սպասեցով պատասխանիւ Բայց հօր հայրական զգացմունքներից դուրս թռած հարցը՝ ցանկալի պատասխանը չըստացաւ. ընդհակառակ բարձրացան երկիւղի և վախի ճշոցներ:

«Նա է, նա».

Յետոյ լուեց սեղանի շուռ գալու ձայնը, իսկ հետեւալ ըսպէին տիրեց խորին լռութիւն: Յուզմունքից ուսուցչի ձեռները այնպէս էին դողդողում, որ միանգամից չկարողացաւ դուռը բաց անել, իսկ երբ այդ նրան մի կերպ յաջողուեց, նրանց գէմից մի այնպիսի պաղ քամի փչեց, որ մօմը հանգաւ: Սենեակում բոլորովին մութ էր:

Շուտ, շուտ վառեցէք լուցիկն. լուցիկի, շուտ, շուտ: Միայն երբորդ լուցիկին վառուեց ինչպէս պէտքն էր՝ որով և կարելի եղաւ ճրագը վառել:

— Պետրոս, Յովսէփ:

Պատասխան չկայ:

Երեխաների շորերը աթուռի վերայ էին: Անկողիններում՝ որոնց մէջ նրանք ըստ երևոյթին պառկած պիտի լինէին, ոչինչ չկար: Կենդանութիւնը վախից այս ու այն կողմն էր նայում. բայց և ոչ մի անհիւսնում երեխաների հետքը չէր երևում: Միթէ նրանք յարդի մէջ են պահ մտել:

— Պետրոս, Յովսէփ, ո՞ւր էք դուք, այլայլուած կանչում էր Մերկը:

— Տէր ողորմեա, չը լինի թէ նրանք կտուր են փախել, բացահանչեց ուսուցիչը:

Յաճը լուսամուտը բաց էր թողած. սեղանն էլ գրուած էր լուսամուտի տակ:

Միանգամայն Կեննիգսհորֆը թռաւ սեղանի վերայ և գլուխը լուսամասէն ներս մտցրեց:

— Ահա նա՛, ահա— լսուեցին վախեցած երեխաների վերջին խօսքերը: Թռնաւորութեամբ ու վախեցած երեխաները միայն մի շապիկով էին բարձրացել ձիւնով ծածկուած կտրի վերայ և թաթերի վերայ կուչ եկած մտել էին լայն ջրհոս խողովակներէ մէջ: Հալուող ձեան կտորները ռաների տակ սղուծ էին և դետին ընկնում:

— Պետրո՛ս, ձայն տուեց վախեցած Կեննիգսհորֆը և հաղիւ գուրս եկաւ նեղ լուսամուտից դէպի կտուրը: Բայց փախստականները նրան չէին լսում: Նրանք սողում էին աւելի հեռու շնայելով որ իւրաքանչիւր բոպէ մայթի վերայ ընկնելու վտանգի մէջ էին գտնուում: Ուսուցիչը ջրահոս խողովակի մի անկիւնում նստաւ. իսկ այդ միջոցին Պետրոսը արդէն կտրի վերջին էր հասել. այնտեղից չէր կարելի անցնել աղատուել, որովհետեւ հարեան տների կտուրները սուելի բարձր էին: Կեննիգսհորֆը աշխատում էր զգուշութեամբ երեխաներին մօտենալ:

— Վերադարձէք, վերադարձէք, չէ որ կընկնէք. բայց փախստականները ահանջ չէին դնում, այլ միայն վախից մըթնացած աչքերով տեսնում էին, որ իրանց հետեւողը մօտենում է: Յանկարծ Պետրոսը կամակորեց, ձեռները կոխեց հարեան տան պատի ճեղքերի մէջ ու պատից ճանկուելով կատուի նման վեր բարձրացաւ ձեռքը ձգելով տան կտրի ձեան կտորին, իսկ կտորը սլիաց երեխայի ձեռքիցը, լաւ որ նա կտրի երկաթից արդէն ամուր բռնած էր ու այդպէս վերջապէս բարձրացաւ միւս բարձր կտրի վերայ:

— Ի՞մ յետեւից Յովսէփ, նա քեզ կը բռնէ, և պառկած զիրքով կռացաւ կտրի եզերքին ու ձեռքը երկարացրեց եղբորը իւր մօտ քաշելու, բայց արդէն ուշ էր. ուսուցիչը կանգնած էր նրա քամակին և պինդ բռնած էր Յովսէփին, որը գեւ նոր էր փորձում պատից բարձրանալ: Կեննիգսհորֆը քաշտալ չէր վստահանում, որովհետեւ մեծ եղբայրն էլ փոքրի ձեռքն էր բռնած ու բաց չէր թողնում. մի թեթեւ՝ անզգոյշ շարժում և ահա երեքն էլ կը գլորուէին դէպի մութ փողոց, ուր լապտերները սղօտ լուսաւորում էին:

— Պետրոս, ո՛ւր մնաց քո խոստումը: Թող եղբօրդ ձեռք, եթէ ոչ նա վայր կընկնի:

Մեծը փոքրի ձեռք թողեց ու աչքը բանալուն պէս նստեցաւ միայն ուսուցչին:

— Պետրո՛ս, վերադարձիր, վերադարձիր իսկոյն, եթէ չես

կամենում ուխտագրուժ լինիլ, աղաչում էր ուսուցիչը: Սպասիր՝ ես քեզ կօգնեմ:

— Նա, նա, յանկարծ նորից բղաւեց Պետրոսը և փոխանակ վերադառնալու, ձեռքերի վերայ սողաց հարեան կտրի վերայ:

Կենիգսդօրֆը յետ նայեց, տեսաւ որ երեխաների հայրն էլ էր իրան հետեւել ջրահոս խողովակի վերայով:

— Յետ գնա՛ Մերկ, առաց նա: Յետ գնա՛, ձեզ հրամայում եմ, յետ գնա՛:

Երեխաները ձեռնից վախենում են և կարող են վայր ընկնել: Առաջ մի գնա՛: Երեխաներին մի՛ ձեռք տալ. քեզ տո՛ւմ եմ՝ յետ գնա՛: Բայց Մերկը չէր հնազանդուում. ելիկողը երեխաների համար նրան առաջ էք քշում, բայց ուսուցիչը կրկին բղաւեց: Յետ գնա՛, եթէ ոչ անբաղդութիւն կը լինի:

Միայն այդ ժամանակ բանւորը ծնկաչոր ներս մտաւ նեղ լուսամուտից: Պետրոսը, որ միշտ առաջ էր գնում՝ յետ նայելով, տեսաւ որ հայրը չկայ, վերադառնալով՝ յետ կանգնեց իր յուսահատ փախուստից:

— Վերադարձիր Պետրոս, քեզ ոչ ոք ձեռք չի տալ. բաւա-կան է, վերադարձիր:

— Ես նրանից սաստիկ վախենում եմ:

— Մերկ, գնացէք իմ սենեակը և սպասէք ինձ. երեխաները սարսափելի կերպով վախենում են ձեռնից:

Խեղճ, անբաղդ հայրը լուսամուտի մօտ այնպէս մի խոր ակա քաշեց, որ կարծես բղաւում էր:

Պետրոս, կանչեց նա և ձեռք որդուն երկարացրեց:

— Այդ ամենը ի դուր են, գնացէք:

Մի րոպէ էլի կռուեց մարդը ինքն իրան հետ, միանգամ էլ նայեց երեխաներին իսկ յետոյ հնազանդուելով երիտասարդ ուսուցչի հրամանին տքալով ու ակա քաշելով վայր իջաւ սենեակ:

— Գնանք, ես քեզ կը տանեմ, առաց Կենիգսդօրֆը Յովսէփին, եթէ ոչ դու կը սառես:

Նա փորձեց նրան զդուշութեամբ առաջ տանել, բայց երեխան ամուր բռնել էր խողովակից և չէր ցանկանում տեղից շարժուիլ:

— Թող խողովակը, Յովսէփ, և մի կանչի, եթէ ոչ Պետրոսը վախից վայր կընկնի գետին և կը մեռնի, շշնայաց ուսուցիչը նրա աղանջին. իսկ նա ճիշտ որ գնացել է. հարցրեց երեխան:

— Այո՛, չէ՞ որ դու լսեցիր, որ ես նրան հրամայեցի գնալ:

Այդպէս զգոյշ առաջ սողա՛մ. ես քեզ պինդ եմ բռնել: Նրանք տանիքի փոքրիկ պատուհանից ներս սողացին. Կենիդըս-դօրֆը աչք ձգելով Պետրոսի վերայ ձայն տուեց, արի՛, արի՛. քո հայրը սենեակում չէ:

Յովսէփը նոյնպէս գլուխը ներս մտցրեց լուսամուտից համազուելու համար, թէ ճիշտ է և տեսնելով հօր բացակայութիւնը այլ ևս չընդդիմացաւ, երբ Կենիդօդօրֆը զգուշութեամբ վայր էր իջեցնում նրան գէպի սենեակը:

— Գու ինքզ փակիր դուռը և կանգնիր վառարանի մօտ, հրամայեց Կենիդօդօրֆը, և երեխան հրամանը իսկոյն կատարեց:

Պետրոսը հարևան կտրից ուշադրութիւնը լարած լսում էր, թէ արդեօք ի՞նչ է լինելու. — եղբայրը չէր բղաւում՝ ասել է, ճիշտ որ հայրը այնտեղ չէ:

Նա կարծես թեթեացած հաւառեց և զարմացմամբ նայում էր ուսուցչի վրայ:

— Գէ՛ շուտ արա՛, եկ, Պետրո՛ս, ասաց նա. հայրդ ցած գնաց, իսկ Յովսէփը սանդուխի դուռը փակել է: Բայց երեխան հարցական հայեացքով նայում էր ուսուցչին, կախ տալով իրան կտրից: Հալուող ձիւնը ամենաթեթեւ չարժութից թռուչում էր նրա տակից, իսկ ձեռները փետացել էին, երկար ժամանակ նա չէր կարող բռնել:

— Եթէ դու իսկոյն վերադառնաս, ես քեզ խօսք եմ տալիս, ոչ հայրդ և ո՛չ էլ ես քեզ չենք պատժիլ, ասաց Կենիդօդօրֆը դուշակելով երեխայի կասկածը:

Միայն այդ խօսքերից յետոյ Պետրոսը նոր սկսեց իր հակառակ ճանապարհորդութիւնը: Կատուի նման նա ցատկեց կտրից գէպի խողովակը, որտեղ նրան սպասում էր ուսուցիչը:

Նեղլիկ պատուհանի առաջ երեխան կրկին կանգ առաւ.

— ձիւն է, նա գնացել է:

— Ինքզ նայիր:

Պետրոսը ներս նայեց: Եղբայրը նրան նշան արեց, որ նա՝ որից իրանք անչափ վախենում էին, սենեակում չէ: Պետրոսը ակն քաշեց:

— Ես ինքս միայնակ կարող եմ, ասաց նա մերժելով ուսուցչի օգնութիւնը և լուսամուտից վայր թռաւ սեղանի վրայ: Յանկարծ տեսնելով իրան յատակի վրայ, առաջի գործը եղաւ վազել գէպի դուռը համազուելու համար, թէ լաւ փակուած է: Իսկ այդ ժամանակ ուսուցիչը վայր էր իջնում գէպի սենեակ: Նա սաստիկ գունատուած էր. փակելով լուսամուտը ծանր շունչ քաշեց: Նա շատ քարկացած էր և զայրացած. և մօտե-

նախով Պետրոսին, կտրուկ կերպով հարցրեց. «Ինչի՞ դու այդպիսի բան արիր»:

— Ահա թէ ինչու —. Մեղացած ու սերտ առած պատասխանեց երեխան և եղբոր շապիկը պատառելով ցոյց տուեց կրկին նրա թիկունքի վերայի վէրքը:

— Կը նշանակէ դու հօրիցդ վախենում ես:

— Այո՛:

— Հագէք, ցուրտ է:

Երեխաները հրամանը կատարեցին:

— Իսկ եթէ դուք կտրից վայր ընկնէ՞ք:

Երեխաները չը պատասխանեցին, այլ սաստիկ դողդողալով մօտեցան տաք վառարանին:

— Դուք գիտէ՞ք, որ ես սուտ չեմ ասել. կամ կարելի է, դուք ինձ է՛լ չէք հաւատում՝ մի քիչ անցնելուց յետոյ հարցրեց ուսուցիչը:

Ո՛չ, հաւատում ենք:

— Ձեր հօրը ես էի կանչել ինձ մօտ: Նա այլ ևս ձեզ ծեծելու չէ: Նա ցանկացաւ ձեզ տեսնել: Նա ցածրում ինձ կըսպասի. ես հիմա գնում եմ նրա մօտ:

Նա շատ անբաղդ է. նա ոչ ոք չունի, որ իր վրայ հոգ տանի. ես նրան կասեմ, որ դուք էլ նրանը չէք:

— Յովսէփ, դու ինչո՞ւ ես լալիս:

Երեխան չը պատասխանեց:

— Միթէ դու հօրդ չե՞ս խղճում:

— Խղճում եմ:

— Եթէ այդպէս է՝ ես նրան կասեմ, որ դուք խոտանում էք ուղղուել... Նա ձեզ իր հետ տանելու չէ, որովհետեւ նա ինքը չի կարող ձեր վրայ հոգ տանել:

Արդեօք չէ՞ք ցանկոնում գոնէ մի բոպէով իմ հետ նրա մօտ գնալ:

— Ո՛չ, յայտնեց Պետրոսը և բուրբուլին կծկուելով դէպի պատնէք սեղմւում՝ ճիշտ նրա մէջ որոնելով փրկութիւն: Պատուիրքո հօրդ և մօրդ... Սկսեց ուսուցիչը, բայց հէնց նոյն վայրկեանին զգաց, որ երեխաներին այդ պատուէրը չի ներգործում:

Մի քիչ լռելուց յետոյ: «Ամենից առաջ լուռ տաքացէք և շնորհակալ եղէք Արարչից, որ ձեզ ոչ մի փորձանք չը պատահեց կտրի վրայ. իսկ ես կըզնամ ձեր հօր մօտ և կրկին կը խօսեմ նրա հետ, եթէ նա ինձ խօսք կը տայ, որ ձեզ չի գիպչել—արդեօք դրանից յետոյ նրան ձեռ կը տա՞ք:

— Այո՛, պատասխանեց Յովսէփը. հէնց նրա յետեից էլ Պետրոսը գլխով համաձայնութեան նշան արաւ:

— Իսկ դուք նորից կտուր չէ՞ք փախչիլ, քանի որ ես ցածն եմ:

— Ո՛չ:

— Եթէ այդպէս է, ես շուտով ձեր յեանից կը գամ:

— Կենդիւ գործըք գնաց և դուռն էլ զրոյից փակեց...

Նա Մերկին դտաւ շափաղանց կտորուած դրութեան մէջ:

— Փառք Աստուծոյ, երեխաները անվնաս վերադարձան սենեակ:

— Դուք ինքներդ տեսնում էք, թէ երեխաները ձեզնից ո՞ր աստիճան վախեցած են և վախենում են, իսկ դրա պատճառը ձեզ լաւ յայտնի է: Դուք երեխաների սէրը կորցրել էք: Ուժով երեխաների վստահութիւնը չի կարելի ձեզ վերադարձնել: Ես հիմա նրանց կը բերեմ ձեզ մօտ և եթէ կամենում էք ինձ լսել՝ ամենաթեթեւ յանդիմանութիւն անգամ անելու չէք: Նրանք առանց այն էլ շատ ու շատ վախենում են:

Հասկացա՞ք:

Մերկը որպէս պատասխան գլխի շարժում արաւ. նա դեռ կուչ էր դալիս գետնին նայելով:

Հաղիւ երբեմն նրա աշխատաւոր ահագին ձեռները ցրնցուելով շարժում էին, որպէս թէ կամենալով մի բան սեղմել:

Նրա թշուառ դրութիւնը ազդեց ուսուցչին. պատեց խորին կարեկցութիւն, դա մի մարդ էր, որը կորցրել էր կնոջը, երեխաներին, ուրիշի և իր յատուկ մեղքի պատճառով:

— Մէրկ, ամբապնդուէ՞ք, եղէ՛ք ազամարդ և բարձրացրէ՞ք դուռնդ: Եթէ դուք, յիշաւի, վճռել էք քաւել ձեր մեղքը, դեռ դրա համար երկար ժամանակ կայ: Հասկանո՞ւմ էք, երեխաների հետ խիստ մի լինի՞ք, ես կը գնամ նրանց բերելու:

— Իսկ նա մեզ ոչինչ չի՞ անի, ձեռք չի՞ տալ, Պետրոսը վաղեց ուսուցչի առաջը կտրելով, երբ նա ներս մտաւ:

— Ամենեւին: Զեր հայրը շատ անբաղդ է: Նա շատ և շատ վշտեր է տեսել: Եթէ դուք նրա հետ լաւ լինի՞ք՝ նա էլ նոյն տեսակ բարութեամբ կը նայէ:

Կենդիւ գործըք վերադարձաւ իր սենեակը բռնած երեխաների ձեռներից. նրանք էլ նոյնպէս ուսուցչին էին բռնել, կարծես թէ իրանց բոլոր պաշտպանութիւնը դրա մէջ էին գրտնում և միևնոյն ժամանակ աշխատում էին ուսուցչի շրթերի տակ պահ մօնել: Մերկը երկարացրեց նրանց իւր ձեռը, բայց երեխաները չը շարժուեցան և դեռ դողում էին: Հայրը այլ ևս չկարողացաւ դիմանալ այդպիսի մի հոգեկան մաշող տանջանքի և երեխայի նման սկսեց լալ:

—Մի բոսցէ երեխաները քարացած կանգնած էին: Այդ դրութեան մէջ նրանք երբէք իրանց հօրը տեսած չէին:

—Նա ձեզ համար է լալիս, ժողովուրդը նրանց տկանջին ուսուցիչը:

—Հայրի՜կ, աղաղակեց Յովսէփը և արտասուքը աչքերին ընկաւ բանւոր հօր ծնկներէ մէջ. հայրը ծածկեց աղայի գէմքը իր մաղերով և լալիս էր: Այդ միջոցին Պետրոսն էլ բռնեց հօր ձեռքը...

—Հայրի՜կ, կրկնեց եղբօր յետևից: Եւ խոշոր արցունքի կաթիլները սկսան թափուել նրա գունատ, տանջուած գէմքի վրայից:

Կենիգսդօրֆը զգաց, որ իր ներկայութիւնը այդտեղ աւելորդ է, մտաւ միւս սենեակը: Մի քանի ժամանակից յետոյ վերադարձաւ և տեսաւ Մերկին նոյն տեղը, բայց նա այլ ևս չէր լալիս, այլ փաղաքշում ու շոյում էր երեխաների ձեռները...

—Իսկ այժմ ձեզ ժամանակ է քնելու, ասաց Կենիգսդօրֆը: Հայրիկը ամեն օր կը գայ ձեզ տեսութեան և շատ կուրախանայ, եթէ ես նրան հաղորդեմ, որ դուք խելօք, խելացի էք: Ուրեմն ձեռք առէք հայրիկին և գնանք:

Մերկը կանգնեց:

—Եղէք բարի ու խելօք երեխաներ և շնորհակալութիւն յայտնէք պ. ուսուցչին, ինքն էլ պինդ սեղմեց—Կենիգսդօրֆի ձեռքը: —Ես կարո՞ղ եմ կրկին գալ:

—Եթէ կցանկաք, իմ բարեկամ:

—Պ. ուսուցիչ, ես... ես առաջուայ նման պիտի աշխատեմ:

—Ես երբէք չեմ մոռանալ այն ամենը, ինչ որ դուք մեզ համար արեք, շնորհակալ եմ ձեզանից:

Եւ գնաց:

Կենիգսդօրֆը երեխաներին տարաւ իրանց սենեակը և նրանց հետ աղօթեց:

Թարգ. Նրեմիա վարդապետ

